

## ՓԻԼԻՍՈՓԱՅ՝ՍՈՅԻՕԼՈԳ \*)

Ինչպէ՞ս են առաջացել դասակարգերը:—Սպենսերեան թէօրիան:—«Հոմոգէնի» անկայունութիւնը:—Նախնական վիճակ:—Մարդակերութիւն և գերութիւն:—Սպենսեր և Մարքս:—Տնտեսական գործօնի գերակշռող դերը:—Գերութիւնը իբրև պրոգրեսիւ մի հաստատութիւն:—Պատ. յաջորդական ֆազիսներ:—Ստրկութիւն և ճորտութիւն:—Ինչպէ՞ս է ծնունդ առել միահեծան բռնապետութիւնը:—«Աստուածային ծաղման» թէօրիան:—Բռնապետութեան անխուսափելի անկումը:

Դասակարգային բաժանումը մարդկային հասարակութեան մէջ մի անզամ արդէն սկզբնաւորուելով՝ առաջ է գնում ճակատագրական անհրաժեշտութեամբ և միշտ նորանոր ճիւղաւորումներով: Սպենսերեան օրէնքը փորձում է լուսարանել այդ էւօլիւցիան, — մէկը սոցիօլոգիական ամենածանրակշիռ պրոբլեմներից:

„Հասարակական ազդեգատի մէջ (agrégat, համախմբում), ինչպէս ամեն մի ուրիշ ազդեգատում, միատարր (հոմոգէն) գրութիւնը անկայուն է, և երբ արդէն գոյութիւն ունի մի որոշեալ այլատարրութիւն (hétérogénéité), վերջինը ձգտում է աւելի ևս մեծանալ“, — ահա այդ ընդհանուր, տիրական օրէնքը:

Բացարձակապէս հոմատարր վիճակ երբէք չէ եղել մարդկային հասարակութեան մէջ, ինչպէս նա չէ հղել տիեզերական միգային զանգուածում, ինչպէս նա չէ հղել և կեանքի աղբիւր — պրոտոպլազմի մէջ: Որոշ չափով զանազանաւորում, դիֆֆերենցիացիա գոյութիւն ունի միշտ:

Հասարակական օրգանիզմը իր ամենասկզբնական վիճակում անզամ որոշ չափով այլատարր էր, հէնց այն պատճառով որ երկու տարբեր սեռ, տղամարդ և կնամարդ կանգնած էին դէմ առ դէմ, իրենց տարբեր ուժերով ու ֆունկցիաներով, մէկը իբրև իշխող ու կառավարող, միւսը՝ իբրև ստորադրեալ: Ահա ձեզ արդէն երկու դասակարգ իսկզբանէ անտի:

\*) Տես «Մուրճ», № 8.

Ժամանակի ընթացքում ծնունդ է առնում կանանց կողքին մի այլ ստրուկ տարր—գերիների դասակարգը: Ինչպէս է ծնւում նա:

Պատասխանը պարզ է:

„Փաստեր կան, առում է Սպենսեր, որոնք մտածել են տալիս, որ մարդկանց գերի դարձնելու սովորութիւնը աննըժարելի աստիճաններով առաջ է գալիս մարդակերութիւնից... Երբ գերի բռնուածները չափազանց շատ էին և անկարելի էր իսկոյն նրանց լափել, մի մասը պահել են աւելի ուշ սպառելու համար և պարզուել է որ այդ գերիներին աշխատեցնելով, աւելի արդիւնք կարելի է ստանալ, քան թէ մորթելով. այն ժամանակ ծագել է սովորութիւն՝ պահելու բռնուածներին որպէս գերի 1)“:

Գրէթէ բոլորովին նման բացատրութիւն է տալիս և Մարքսի տնտեսական մատերիալիզմը. Սպենսերը միայն զանց է առնում յիշել, որ գերութեան ծնունդը պատկանում է այն նշանաւոր էպօսային, երբ գնեսական ու նահապետական կարգերի խորտակուելու հետ՝ հիմնականապէս յեղաշրջւում էին սեփականատիրական պայմանները, երբ արդիւնաբերական գործիքների մշակման շնորհիւ՝ կործանւում էր հին, համայնական սեփականութեան սիստեմը և ծնունդ էր առնում անհատական, մասնատր սեփականութիւնը, երբ անհատը կարող էր աւելի արտադրել, քան սպառել, երբ այդպիսով „տէրերին“, զօրավարներին հնարաւորութիւն էր ներկայանում շահագործելու իր նմաններին, աշխատեցնելու որպէս անլեզու գրաստների, քամելու նրանց վերջին ուժերը և նիւթական հարստութիւններ ամբարելու:

Դասակարգի ծագման ու զարգացման պրոցեսում անուրանալի է տնտեսական գործօնի—արդիւնաբերական միջոցների մշակման ու ծաւալման—մեծ, գերակշռող, վճռական դերը, և Սպենսեր չափազանց միակողմանի դատողութիւն է յայտնում, ասելով որ պատերազմական—զինուորական վիճակը ակտիւ պատճառն է դասակարգային զանազանաւորման, այսինքն դասակարգերի առաջանալուն:

Գերութեան շրջանը յատկանշում է առաջին մեծ դասակարգային բաժանումը մարդկային հասարակութեան մէջ: Ընտանեկան հողից՝ սիստեմը անցնում էր քաղաքական—սօցիալական հողի վրայ և առաջ բերում երկու բոլորովին տարբեր դասակարգեր, որոնցից մէկը՝ իր աշխատանքով պահպա-

1) Principes de Sociologie:

նուժ էր ամբողջ համայնքի գոյութիւնը, միւսը՝ իշխող փոքրամասնութիւնը՝ ստանձնում էր կառավարելու զերը:

Գերին գուրկ էր մարդկային բոլոր իրաւունքներէց, նա չունէր իրաւական անճշտութիւնը: Իր ամբողջ ընտանիքով նա դուռն էր տիրոջ քմահաճ տրամադրութեան տակ, որը կարող էր անպատիժ կերպով մեռցնել կամ ծախել նրան, կնոջ ու երեխաներին: Գերին նոյնպիսի մի սեփականութիւն էր տիրոջ ձեռքում, ինչպէս մի կտոր հող, մի եղ, մի գործիք:

Այդ վիճակը գրեթէ համաշխարհային տարածումն ունէր: Արեւելքը գերութեան ծաղկման որրանն է իհարկէ: Գրեթէ բոլոր երկրները—Նգիպտոս, Ասորեստան, Հնդկաստան, Չինաստան և այլն—տեսել են այդ ուժիմը:

Պարզ է, թէ որքան աղետաբեր հետևանքներ կարող էր ունենալ գերութեան ուժիմը մարդկանց բարոյականի տեսակէտից: Եւ այն՝ ոչ միայն գերիներէի համար, որոնք կորցնում էին իսպառ մարդկային արժանապատուութեան զգացումը և դատապարտուելով գրաստի յաւիտենական աշխատանքի՝ իսպառ բթանում էին ուղեղով—այլ և իրանց՝ տէրերի համար: Բացարձակ ու բռնակալ հեղինակութեան մշտնջենաւոր գործադրութիւնը ապականում էր բարքերը: Ամեն մի տէր, գերիներէի ամեն մի խմբի հրամանատար մի սանձարձակ բռնակալ էր իր շրջանում ու ընտանիքում, զարգանում էին հրէշաւոր չափերով զգայնական ակորթակները, թունաւորում էր ընտանեկան, հասարակական կեանքը... Այո, և այնուամենայնիւ գերութիւնը հասարակական գիտութեան դատաստանի առջև հանդիսանում է ոչ միայն իբրև անհրաժեշտ, այլ և օգտակար ու պրօգրեսիւ հաստատութիւն: Պրօգրէս էր նա հէնց բարոյական տեսակէտից. թէ և դաժան, տմարդի, բռնակալ, բայց նա դէթ այլ ևս խմբովին չէր մորթում, լափում մարդ-էակներին, ինչպէս անուժ էր կաննիրալիզմի, մարդակերութեան շրջանում. գերութեան ուժիմը խնայում էր մարդուս ամենաթանգազին սեփականութիւնը,—խնայում էր կեանքը: Պրօգրէս էր նա և տնտեսական զարգացման տեսակէտից, քանի որ բազմամիլիօն գերիների անդուլ ֆիզիքական աշխատանքը ահազին թռիչքներ էր հաղորդում արդիւնաբերութեան և առկարին: Պրօգրէս էր և ընդհանուր կուլտուրական տեսակէտից. գերիների շնորհիւ մի ամբողջ դասակարգ հնարաւորութիւն ունէր նուիրուելու մտաւոր, քաղաքակրթական աշխատանքի, զարգացնում էր արուեստը, գիտութիւնը, փիլիսոփայութիւնը:

առանց հնադարեան գերութեան՝ թերևս անհնարին լինէր Արիստոտէլների ու Ֆրդիասների երևան գալը...

\*  
\*  
\*

Էվոլուցեան շարունակում է գերութեան սիստէմին յաջորդում է Նորտուլմեան սիստէմը: Նա սկիզբ է առնում, Սպինսերի կարծիքով, հողային ընդարձակ նուաճումներով: Նուաճում էին ամբողջ համայնքներ և բունի միացում յաղթողի համայնքին: Մարդիկ այլևս չէին պոկում իրենց ծննդավայրից, ինչպէս գերութեան դաժան ժամանակներում, այլ մնում էին իրենց նուաճուած, հայրենիքի մէջ, իբրև օրինաւոր հպատակներ և որոշ տուրք էին վճարում նուաճողներին: Դարձեալ ստրկութիւն է, միայն այն զգալի տարբերութեամբ՝ որ աշխատաւոր մեծամասնութիւնը արդէն վայելում է որոշ իրաւունքներ. մարդկանց այլ ևս չէին կարող սպանել ուզած ժամանակ, կամ անվերջ աշխատեցնել մտրակով և դազանակով:

Նուաճողները—սովորաբար տարբեր ցեղից—կազմում էին զինուորական մի կաստա և պահանջում էին հողի մշակողների բերքերից մի որոշ մասը: Տրամադրելի ստրուկների թիւը մարդկանց ձեռքում կրիտէրիում էր ոչ միայն ուժի և հարստութեան, այլ և ,ազնուականութեան': Ըստ այնմ հասարակութիւնը բաժանուած էր՝ ազնուականների և պարզ սովորական մահկանացուների:

Ձինուորական բառը նախնի դարերում գրեթէ համանիշ էր քաղաքական բառին: Հողատէրերը—յաղթողները, նուաճողները—միաժամանակ զինուորներ էին, այն ինչ ամեն տեսակ ստրուկները, ճորտերը արտաքսուած էին զինուորական ծառայութիւնից (ժամանակը շատ տեղերում փոփոխեց, մեղմեց այդ յարաբերութիւնները): Այդտեղ է հիմնական տարբերութիւնը երկու մեծ դասակարգերի միջև, —մէկը զինուորական, իշխող ու կառավարող, միւսը աշխատաւոր:

Դասակարգային դանազանաւորման նպաստում էր որոշ, արական ծննդակարգի սահմանումը: Անհաւասարութիւնը դասակարգերի մէջ միշտ աւելի և սուելի աճում է, քանի որ նրա շնորհիւ իսկ՝ իշխողը, բարձր դիրք ունեցողը միջոցներ է ձեռք բերում պահպանելու իր ուժը և աճեցնելու իր յարձակողական ու պաշտպանողական ուժերը: Հասարակական դիրքի անհաւասարութիւնը առաջ է բերում ֆրդիքական տարբերութիւններ. ապրելու տարբեր եղանակները արտադրում են մտաւոր ու հոգեկան—զգացողական տարբերութիւններ, որոնք

հետզհետէ աւելի ևս ծանրացնում են կօնտրաստոյ դասակարգերի միջև:

Քաղաքական էւօլիւցիան միշտ առաջ է գնում: Նուաճումները շնորհիւ, բազմաթիւ մանր համայնքներ ձուլւում են, կազմում մեծ ու բարդ հասարակութիւններ: Մանր ու մունր գինուորական շէֆերը, սեփականատէր—ճորտատէրերը կամաց-կամաց տեղի են տալիս մի լայնածաւալ, որոշ ու յստակ հասարակական խաւի, կառավարչական մի բարդ մեխանիզմի, որի գլուխ է կանգնած բացարձակ լիազօրութիւններով մի շէֆ թագաւոր:

Մեր տեսութեան նախորդ էջերում արդէն խօսեցինք կառավարութեան նախնի ձևերի մասին, որ համայնքի աւագագոյն ներկայացուցիչների ձայնը այնքան մեծ կշիռ ունէր, ուր հանդիսատես ամբոխն անգամ յաճախ ազդում էր խնդիրների լուծման ընթացքի վրայ իր հաւանութեան կամ պարսաւանքի ազդակներով, ուր շէֆերը, ժողովուրդների հրոմանատարները աւելի, այսպէս ասած, իշխում էին, քան կառավարում:

Այդ դրութեան մէջ շատ հաճելի ուսմկավարական, իդիլիկ կողմեր կան, բայց այնուամենայնիւ նա հին ու խաւար դարերի ծնունդ էր և պէտք է չքանար քաղաքակրթութեան ալիքների առջև: Քաղաքակրթութեան սկզբունքը շարժուել է ուզում լայն հօրիզոններում... Մանր համայնքները իրենց ուսմկավար, բայց նահապետական, բիրտ կառավարութիւններով պիտի տեղի տային ճակատագրօրէն աւելի մեծ, թէկուզ և բռնաւոր, պետութիւններին, կառավարութիւններին:

Միահեծան բռնապետութեան սկզբունքը, ինքն ըստ ինքեան անհամակրելի է, բայց մենք դատում ենք այն՝ ոչ ըստ ցարձակ absolu-ի, այլ յարաբերականի, relatit-ի տեսակէտից: Այդպէս դատելով՝ բռնակալ միապետութիւնը ընդունելի է,— իբրև ժամանակաւոր, ոչ մշտակայուն մի հաստատութիւն: Իբրև այդպիսին՝ նա միանշամայն դրական ու օգտակար մի կատէգորիա է պատմական էվոլիւցիայի պրոցէսում:

„Իրողութիւնները ստիպում են մեզ խոստովանել ասում է Սպենսեր, որ մարդկանց ստորադրումը բռնակալ վեհապետներին մեծապէս նպաստել է քաղաքակրթութեան առաջադիմութեանը: Թէ ինդուկտիվ և թէ դէդուկտիվ ճանապարհները, որքան կուզէք, ապացոյցներ կրբերեն դրան!

„Բռնակալութեան անհրաժեշտութիւնը աւելի ևս լաւ կը գիտակցէք, երբ ի նկատի ունենաք, որ հասարակութիւն-

ների գոյութեան կուում հաւասար սլայմանների մէջ յաղթողը եղել են նրանք, որոնք ենթարկուած են եղել ամենից խիստ ստորադասութեան (Subordination) իրենց շէֆերին, թագաւորներին:

«Քանի որ նախնական դարերում զինուորական ստորադասութիւնը և հասարակական հպատակութիւնը ընթանում էին զուգակցաբար, պարզ է ուրեմն որ երկար ժամանակ նուաճող հասարակութիւնները ենթարկուած են եղել բռնակալ ուէժիմի: Պատմութեան տուած բացառութիւնները իրօք միայն հաստատում են այդ կանոնը: Սովորութիւնը՝ դիքտատոր նշանակել այն վայրկեաններում, երբ թշնամու կողմից վտանգ էր ապառնում հանրապետութեանը՝ մտածել է տալիս, որ հոռոմայեցիները փորձով հասկացել էին, որ միահեծան իշխանութիւնը գերազանցութեան սլայմանն է պատերազմի մէջ»:

Այդպէս ուրեմն մարդկային հասարակութիւնների գոյութեան անողոր, յարատև արհաւրալի կոիւնեթն են, որ ժամանակի ընթացքում ձուլելով մանր համայնքները աւելի և աւելի խոշոր հասարակութիւնների մէջ և ծնունդ տալով մեծ ազգութիւններին, առաջ են բերել հասարակական այն համեմատաբար բարձր տիպը, որի յատկանիշն է արսուլիտիզմը, բացարձակ անձնական իշխանութիւնը:

Այդ վերջինը իր զարգացման ընթացքում անցել է զանազան մոմէնտներ: Դեռ սկզբներում՝ շէֆերը, մարդկանց հրամանատարները հիմնում էին իրենց ազդեցութիւնը իրենց անձնական արժանաւորութիւնների վրայ,—ֆիզիքական ուժի, արիութեան, փորձառութեան, կամ թէ իր մտաւոր կարողութիւնների վրայ: Դա այսպէս ասած՝ ընական գերազանցութիւնն էր, որ նախամարդու աչքում մարմնացնում էր հերոսը, ռազմիկը:

Բայց կար և մի ուրիշ «գերազանցութիւն»—արդէն գերընկալան—որի արտայայտիչ հանդիսանում էր կախարդը: Այդ երկու գերազանցութիւնները, յաճախ միանալով միևնոյն շէֆի անձնաւորութեան մէջ, դարձնում էին նրան կարող ու ազդեցիկ, սակայն լոկ դրանց վրայ հիմնուած իշխանութիւնն ու հեղինակութիւնը ժամանակաւոր էր, անցողական,—նա դադարում էր շէֆի մահուան հետ:

Դէտք էր մի այլ գործօն՝ այդ հեղինակութիւնը, այսպէս ասած, յաւերժացնելու համար: Պէտք էր ժառանգականութեան սկզբունքը, առնական գծով: Վերջինս երևան է զալիս քաղաքակրթութեան սանդուխքի համեմատաբար բարձր աստիճանների վրայ, հայրական իրաւունքի տիրապետութեամբ: Մի

իրաւունք՝ որ ժխտումն էր մատրիարխատի (մայրական իրաւունքի) վաղեմի դրութեան, երբ իբրև արդիւնք ամուսնական խառնակեցութեան երկարատև սիստէմի՝ մօր ֆիզիօլոգիական կապն էր միայն հաստատուում սերնդի վրայ, մօր հեղինակութիւնն էր ճանաչուում, յարգուում, մօր անունով էր մկրտուում տոհմը և մօր գծով էր սահմանուում ամբողջ ժառանգականութիւնը:

Պատրիարխատի, հայրական իշխանութեան ամրապնդումը սերտ կապ է հաստատուում գերդաստանի մէջ, զարկ է տալիս հպատակութեան ուժեղման, զարգացնում է դիսցիպլինը, կարգապահութիւնը: Նոյն համայնքի և պետութեան մէջ: Բացարձակ վեհապետը կտակուում է իշխանութիւնը իր յետնորդներին—առնական գծով—որոնք շարունակուում են վարել պետական գործերը: Նոյն բացարձակ ու բռնաւոր ձևով: Կառավարութեան այդ միատեսակ ձևը ժառանգուելով սերնդէ սերունդ, կրկնողութեան շնորհիւ, միշտ աւելի և աւելի ամրապնդուում է, ուժեղանում:

Մի ուրիշ ֆակտոր ևս գալիս է ժամանակի ընթացքում աւելի հմայք և ոյժ հաղորդելու բնկատրի անձնաւորութեան: Դա նրա աստուածային ծագման հանգամանքն է, որի բացատրութիւնը վնասելու է կրօնական վաղէմի հասկացողութիւնների և մասնաւորապէս նախնիքների պաշտամունքի մէջ (Culte des ancêtres), որը Սպինսերեան հռչակաւոր թէօրիայի համեմատ, չուէկէտն է բոլոր կրօնական հաւատալիքների:

Բոլոր նախնի ժողովուրդները ունեցել են այդ սովորութիւնը—մեծարել, պաշտել հարազատ մեռելներին, որոնք դամբարանների շուրջը այլ և այլ ծէսեր են կատարել, զոհեր են մատուցել: Դա կրօնական էվոլյուցիայի սկզբնական շրջանն է, ուր մարդկային միտքը իր խղճուկ, տարտամ ըմբռնումի մէջ՝ առարկայական գոյութիւն էր հաղորդում ամեն տեսակ ոգիների ու հոգիների, որոնք օժտուած էին բարիք ու չարիք գործելու հսկայական կարողութիւններով: Ժամանակի ընթացքում այդ մեռելները ստացել են աստուածային կատրիբուտներ, նրանց մէջ ոմանք իրենց արտակարգ յատկութիւններով՝ առանձին, գերիշխող դիրք են զբաւել, ոչ միայն գերդաստանում, այլ և հասարակական ընդարձակ զանգուածի՝ տոհմի, ցեղի մէջ:

Երկիւղը մի հզօր ուղղիկի, մի հերոս հրամանատարի գերեզմանի առջև՝ մղել է մարդկանց դէպի ապօթէօզ, սոփակել է նրանց աստուածացնել այդ հզօրին, յաճախ նրան սիրաշահելու, զինաթափ անելու նպատակով:

Երբ պատերազմների ու նուաճումների շնորհիւ ցիր ու

ցան մարդկային գանգուածները համախմբուելով ի մի են ձուլուել՝ հերոս-աստուծոյ պաշտամունքն էլ ընդհանրացել է և աւանդաբար անցել սերունդներին: Այդտեղից՝ երկու հետեւանք: Մէկ՝ որ հզօր հրամանատարի յաջորդը, որը գահակալու է հօր մահից յետոյ՝ հռչակուած է իբրև յաջորդակից հօր աստուածային ընտելեան մէկ էլ՝ որ նա իր գոհաբերութիւններով հայր—աստուծոյ աջակցութիւնն է ստանում:

Եւ ահա անսահման լիազօրութիւններ: Քաղաքական շէֆը, իբրև Աստուծոց առաջացած կամ ուղղակի նախալմնամութիւնից սահմանուած՝ դառնում է թէօրիայում և իրականութեան մէջ բացարձակ սեփականատէր իր բոլոր հպատակներին և նրանց գրաւուած բոլոր հողերի:

Երբ, այդպիսով, երկրի հրամանատարը ստանձնում է միահեծան, անսահման իշխանութիւն, երբ հպատակները հլու հնազանդութեամբ խոնարհուած են նրա գահի առջև, ենթարկուած են նրա կապրիզներին, ապաւինում են նրա գլխութեան, երբ «աստուածային ծագման «զօրութեամբ» այդ իշխանութիւնը համարուած է սրբազան ու անբռնաբարելի և ամեն մի ձգտում նրա դէմ՝ բացարձակ սրբապղծութիւն. երբ միահեծան պետը և՛ աստուած է և՛ հրամանատար, այն ժամանակ նա ընակաւնաբար միացնում է իր անձի մէջ իշխանութեան բոլոր ձևերը, այն ժամանակ նա դառնում է և՛ դերագոյն դատաւոր և՛ եկեղեցու պետ: Թագաւորը կենտրոն է հանդիսանում հասարակական բովանդակ կազմի, նրա բովանդակ պաշտօնավարութեան:

Այդ է ինքնակալ բռնապետութիւնը կամ արսօլիտիզմը, իր լիակատար զարգացման մէջ:

Թագաւորը իշխում է տիրականօրէն, բայց կառավարում է ոչ միայն ինքը: Ընդարձակ պետութեան կարիքները հոգալու համար՝ նա պէտք ունի օգնականների, նշանակովի մինիստրների: Վերջիններս, զլուխ կանգնելով այլ և այլ դէպարտամենտների, վարում են գործերը շատ թէ քիչ ինքնազուլու և իրօք սահմանափակում են միահեծանի կամքն ու լիազօրութիւնները: Թագաւորի կապը պետական ամբողջ միխանիզմի հետ դառնալով միշտ աւելի և աւելի անուղղակի՝ հասնում է մի մօմենտ, երբ նրա իշխանութիւնը դառնում է անուանական—le roi règne, mais ne gouverne pas—երբ նա հանդիսանում է լուկ խաղալիք իր առաջին մինիստրի կամ ամբողջ կամարիլլայի ձեռքում. մի ավտօմատ, որ դատապարտուած է պործադրել իր իսկ ստեղծած ազնւանների կամքը...

Եւ այդպիսով վեհապետը յայտնուած է կատարեալ անկարողութեան մէջ՝ իր հրամանները պայմաններին յարմարեց-

նելու և նրանց գործադրուելը կամ չգործադրուելը ստուգելու: Այդ վիճակը պարզ է որ չէ կարող յարատեելի: Արսուիւտիդմը՝ զինուորական, պատերազմական տեսակէտից իր նշանաւոր պատմական դերը կատարելուց, հասարակական զործակցութեանը (Coopération) մեծ զարկ տալուց յետոյ՝ ներքին յարակայ ուժերի մղումով, ժամանակի ընթացքում տեղի է տալիս նոր, սահմանադրական կարգերի առաջ եւ սիւսնեծանի քմահաճ կամքը փոխարինում է ժողովրդական զերիշխանութեան մեծ սկզբունքով:

Միք. Յովհաննիսեան

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԵՒ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐԸ

### I

Ռուսական կուռ արսուիւտիդմի հետզհետէ ջախջախուող փլատակների վրայ շտապում են բազմապիսի տարրեր պարզել իրենց կուսակցական դրօշակները: Աւսուկրատիայի միապաղաղ մթնոլորտը, որ աշխատում էր ամբողջ աղգաբնակութեան կաշկանդել քաղաքական ինդիֆերենտիզմի (անտարբերութեան) նեղ շրջանակի մէջ, չքանում է այսօր զգալի արագութեամբ և տեղի տալիս դասակարգերի և կուսակցութիւնների քաղաքական ազատ մրցութեան:

Իւրաքանչիւր կուսակցութիւն ընկան անհրաժեշտութեամբ ունի իր քաղաքական որոշ ծրագիրը, և իրաւ, ոչ միայն սօցիալ-քաղաքական ծանրակշիռ բեֆորմների և տնտեսական բարենորոգումների նկատմամբ, այլև ապագայ Ռուսաստանի—որի սկիզբը ներկայից է սկսւում—քաղաքական կազմի վերաբերմամբ:

Այդ տեսակէտից միմիանց դիմադրող ու հակասող դաւանանքները, որոնք այսօր քաղաքական հօրիզոնի վրայ հրատապ խնդիրների բնաւորութիւն են ստացել, կազմում են քաղաքա-